ՀՏԴ: 929: 947.925 Հարությունյան

DOI: 10.54503/0135-0536-2025.3-254

ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)*

Թատրոնի պատմությունը ժողովրդի քաղաքային կյանքի և հասարակական կազմակերպվածքի պատմության զուգահեռն է, և թատերագիտությունը՝ որպես գիտություն, ձևավորվել է այդ գիտակցությամբ ու նպատակով: Եվ կա մի էական հանգամանք, որ բարդացրել ու այսօր իսկ բարդացնում է ուսումնասիրողի աշխատանքը: Եթե հասարակությունն ստեղծում է կառավարման ձևեր, հաստատություններ ու փոխանցվող ավանդույթներ, ապա ի՞նչ է ստեղծում թատրոնը, որ այս ամենի ծանրաչափն է: Այս արվեստը ժամանակի հետ է, ամեն ինչ ստեղծում է իր ժամանակին և իր ժամանակի համար ու ոչինչ իր ժամանակից դուրս: Արժեքներն այստեղ դեպքեր են, որ կրկնվում են օրեր, ամիսներ կամ տարիներ ու մաշվում, մոռացվում: Մնում են հայտագրերը, ինչ-ինչ հիշատակումներ, խամրող հուշեր, խիստ հազվադեպ՝ խաղային պահերի նկարագրություններ, սուբյեկտիվ, հաճախ՝ հորինվող: Հայտագրերն ու լրագրային ակնարկները սոսկ բրածո հետքեր են, ոչ արժեքներ, այլ ընդամենը հետքեր, որ թանկ են պատմաբաններիս համար: Բայց որտե՞ղ է պատմությունը, որտե՞ղ են մեր դատողությունների ու վճիռների հենակետերը: Այս է խնդիրը, եթե թատրոնի շուրջ խոսելը համարվել է թատերագիտություն:

Թատրոնի պատմաբանները մոտավոր անցյալում կառչել են դրամատուրգիական արժեքներից և պատմել պիեսների սյուժեները: Բայց դա թատրոնը չէ, գրականություն է՝ թեկուզ և բեմի համար ստեղծված: Լավագույն դեպքում դա խաղի նախագիծն է, եթե դա կռահվի: Իսկ խաղը, ինչպես Ֆրիդրիխ Շիլլերն է ասել, «մեկ հարվածով բացահայտում է մարդուս երկակի էությունը»: Այդ չկրկնվող հարվածների պատմությունը թատերագիտության հիմքն է: Այդ գիտակցությամբ էլ ստեղծվել է 1944 թ. Երևանում հիմնված Թատերական ինստիտուտի թատերագիտական ֆակուլտետը: Թատերագետ դասախոսները՝ Լևոն Քալանթարը և Սարգիս Մելիքսեթյանը՝ որպես բեմն իմացող ու բեմից եկող մարդիկ, այսպես են մտածել՝ նկատի ունենալով արևմտաեվրոպական թատրոնի պատմության ձեռնարկները: Հայ թատրոնի պատմության ամբողջական շարադրանք չի եղել, դասախոսությունների հիմք են ծառայել առանձին ակնարկներ, որոշ հուշագրական փաստեր: Եվ ինչ ու ինչպես էլ խոսվեր, պատմագիտական մոտեցման հիմքը մնում էր դրամատուրգիայի պատմությունը: Ինստիտուտի առաջին թատերագետ շրջանավարտներն ասպարեզ են մտել

* *Ներկայացվել է 25. X. 2025 թ., ընդունվել է տպագրության 17. XI. 2025 թ.:*

որպես լրագրող-քննադատներ (Լ. Խալաթյան, Լ. Հախվերդյան, Ս. Ռիզաև, Ա. Հունանյան, Լ. Սամվելյան), և ստեղծվել է աշխույժ քննադատական մթնոլորտ 1950–1960-ական թվականներին: Չափանիշներն այստեղ գրականագիտական չեն, ելնում են ներկայացումներից ու դերակատարումներից: Դրան նպաստել են բեմական արժեքները՝ երբեմն՝ բացառիկ դրսևորումներով: Բեմը մասնագիտական չափանիշներ է տվել, և այս հիմքի վրա է մշակվել թատերագիտական մտածողությունը, որ չի մոտեցել անցյալի երևույթներին:

Թատերագետ շրջանավարտների այս խմբում առանձնանում է պատմությամբ հետաքրքրվող Բաբկեն Հարությունյանը, որ գրիչ չի փայլեցրել քննադատության մեջ: Շփումներ ունեցել է թատրոնի հետ և գրավել է Սունդուկյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավարի՝ Արմեն Գուլակյանի ուշադրությունը: Գուլակյանը նրան խորհուրդ է տվել գրել հայ առաջին պետական թատրոնի պատմությունը: Ծագել է ասպիրանտուրայի միտքը, և Բ. Հարությունյանը գնացել է Մոսկվա, ընդունվել Լունաչարսկու անվան թատերական արվեստի ինստիտուտի ասպիրանտուրան: Հայ թատրոնի պատմությունն այստեղ չէր կարող դիտվել ռուս թատրոնից անկախ, ուստի Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման ուղղակիորեն առնչվում է հայ-ռուսական թատերական կապերին: Այս հարցը գաղափարական առումով խրախուսելի էր նաև մեզանում: Նոր ստեղծվող Արվեստի ինստիտուտի թատերագիտական ծրագրերում սա հայեցակարգ էր, ինչպես հայտարարում էր ինստիտուտի առաջին տնօրենի՝ Ռուբեն Զարյանի՝ 1955-ին հրատարակած ժողովածուի խորագիրը՝ «Պայքար ռուս դրամատուրգիայի համար հայ բեմում» (1955): Դրան զուգահեռվում են Բ. Հարությունյանի հրատարակած առաջին աշխատությունները՝ «Հայ-ռուսական թատերական կապերը» (1955), «Ռուս դրամատուրգիան սովետահայ բեմում» (ռուսերեն, Երևան, 1957): Այս տրամաբանությամբ է Արվեստի ինստիտուտում հասունացվում հայ թատրոնի պատմությունը ժամանակագրականորեն համակարգելու հարցը: Մտածվում է, որ դա պետք է սկսել պետական թատրոնի ստեղծման շրջանից, և այդ խնդիրը հանձն է առնում Բ. Հարությունյանը:

Աշխատանքը տևում է չորս տարուց ավել: Բ. Հարությունյանի անունը չի երևում մամուլում ու թատերախոսական քննարկումներում, և ոմանք հարց են տալիս, թե ինչո՞վ է նա զբաղված: «Շատ անհետաքրքիր գործով», – պատասխանում է մեկը: Դա մոտավոր անցյալի թատերական կյանքի գրավոր հետքերի որոնումն էր ու համակարգումը՝ այն «սև աշխատանքը», ինչին հետևողականորեն չէին դիմել թատրոնի կենդանի իրականությամբ ու օրվա խնդիրներով զբաղվողները: Եվ ահա 1961-ին հրապարակ բերվեց արդյունքը՝ «Սովետահայ թատրոնի տարեգրություն» ծանր, մեծադիր մի հատոր (700 էջ): Սա հայ թատերական կյանքի ընդամենը քսան տարվա պատմության փաստական տեղեկությունների պատկերն է, որ ավարտվում է 1940 թվականով, և սպասվում է շարունակությունը՝ ևս երեսուն տարի: Միջավայրի զարմանքն ու հիացումն անվերապահ էր: Այս գործից հետո կարելի էր պատմատեսական քննության դնել եղած ու մոռացված դեպքերը: Այստեղ շարակարգված են բեմադրությունները՝ բեմադրողի, դերակատարների, գեղանկարչորեն ձևավորողների անուններով, և հրապարակված թատերախոսականների հասցեները, դրանց ավելացրած անվանական ցանկերը: Այս ամենն արված է որոշակիորեն մշակված սկզբունքով.

նշվում է առաջին ներկայացման ամսաթիվը՝ հետագա կրկնությունների դեպքում, եթե փոխվել են դերակատարները կամ բեմադրությունը տարվել է այլ բեմ: Եվ ամեն ինչ արված է բացառիկ հետևողականությամբ: Հեղինակը ջանացել է ոչինչ բաց չթողնել, թեպետ հետագա քննադատն ասում է, որ բացթողումներ կան: Դրանք չէին կարող չլինել: Բայց քննադատողը չխոսեց այս մասին հրապարակով՝ անգամ հիշեցումներից հետո: Իսկ գործը շարունակվում էր, և օգտվողները ստուգում էին իրենց շարադրանքների փաստական հիմքերը, ճշտում անուններ ու թվականներ: Եվ ստուգումների աղբյուրը, տպագրվածից բացի, հեղինակն ինքն էր՝ Երևանում լիներ, թե Մոսկվայում, ուր սկսել էր թերթել անցյալի մամուլը Լազարյան ճեմարանի հավաքածուներում:

Այս նույն ժամանակ Մոսկվայում լույս տեսավ «Թատերական հանրագիտարանի» առաջին ստվարածավալ հատորը (1961), որտեղ հայ թատրոնին վերաբերող հոդվածների հիմնական մասի հեղինակը Բ. Հարությունյանն էր: Իսկ «Տարեգրությունը», բնական է, միտք էր տալիս վերջապես գրելու հայ թատրոնի պատմությունը, բայց ո՞ր ծայրից, եթե 1922 թիվն էր առաջին պետական թատրոնի սկիզբը:

Տարեգրությունը հիմք դարձավ, որ Արվեստի ինստիտուտում հինգ հեղինակների խմբով (այդ թվում Բ. Հարությունյանը) պատրաստեին ընդարձակ ակնարկների ձևով կազմված մի խոշոր հատոր՝ «Հայ սովետական թատրոնի պատմություն» (1965): Պատմությունը որպես ընթացք, «Թատերական կյանքը» խորագրմամբ, այստեղ ներկայացնում է Բ. Հարությունյանը՝ համառոտ ակնարկներով: Մյուս մասերն առանձին ակնարկներ են՝ դերասանական արվեստ, ռեժիսուրա, նկարչական ձևավորում: Պատմության՝ որպես ամբողջացող ընթացքի պատկերը թողնված է ընթերցողի դիտմանը: Այնուամենայնիվ սա հայ թատրոնի պատմության պետականորեն կազմակերպված շրջանի կարևոր մի մասն է, որ ամբողջանում է 1960-ական թվականներով: Այս գործին զուգահեռ և Արվեստի ինստիտուտից առանձին՝ արևմտահայ թատրոնի փաստական պատմությունն է գրել Գառնիկ Ստեփանյանը՝ «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» վերնագրով (հ. 1, 1962): Ստեփանյանը, այս գործը շարունակելով, աշխատանքի է անցնում Արվեստի ինստիտուտում: Խնդիրներն ընդարձակվում ու ծավալվում են: Մտածվում է, որ պետք է անդրադառնալ XX դարի սկզբին, որպեսզի ամբողջանա արդի թատրոնի պատկերը:

Բ. Հարությունյանը շարունակում է իր բռնած գիծը հետադարձ հայացքով՝ դեպի XIX դարի սկիզբ, որպեսզի ամբողջացվի պատմությունը արևմտահայ և արևելահայ ճյուղերով՝ զուգահեռ ու միասնաբար: Այստեղ նա մասնակից է դարձնում տողերիս հեղինակին որպես խմբագրի («XIX–XX դարերի հայ թատրոնի տարեգրություն», հ. 1, 1980), հաջորդ հատորում (հ. 2, 1980)՝ Լևոն Հախվերդյանին: Վերջինս, ի լրումն «Հայ սովետականի», գրում է XX դարի առաջին երկու տասնամյակների պատմությունը՝ «Հայ թատրոնի պատմություն. 1901–1920» (1980)՝ շնորհակալությամբ օգտվելով զուգահեռաբար հրատարակվող «Տարեգրության» հատորից, որ հիշեցնում է (էջ 7):

Հինգ ծանր հատորներ կազմող այս գործը (վեցերորդը՝ մինչև 1970 թ., հետո է ավելացվել), ըստ էության, խնդիրների առջև է կանգնեցրել Արվեստի ինստիտուտի թատերագիտության բաժնին: Պետք էր հետազոտել համակարգված

փաստական նյութը, գրել թատրոնի պատմություն, փորձել հասկանալ պատմության ու մոտավոր անցյալի թատերական գեղագիտությունը ժամանակակիցների դատողությունների ու տպավորությունների հիման վրա: Հարկ էր ամբողջացնել արևելահայ ու արևմտահայ թատրոնների պատմությունը՝ որպես մեկ ժողովրդի մշակութային կյանքի հիշողություն՝ գեղագիտական առումով: Բաց էր մնում այստեղ XIX դարը. կազմվեց հինգ հոդուց բաղկացած խումբ, վեցերորդը՝ տողերիս հեղինակը, ում առաջարկվում էր ավարտված համարել հին և միջնադարյան թատերական երևույթների ուսումնասիրությունը, անցնել XIX դար: Ժամանակ անցավ՝ հինգ-վեց տարի, ոչինչ չարվեց, և գործը դրվեց ուսերիս: Էմպիրիկ հենակետը հնարավորություն էր տալիս մտածելու, և գրվեց, ասես, ի հեճուկս աննպաստ պայմանների (ցուրտ ու մութ տարիներ), «Հայ թատրոնի պատմություն. 19-րդ դար» (1996, երկրորդ հրատարակությունը՝ 2010): «Տեսնում եմ՝ իզուր չեմ զբաղվել տարեգրությամբ», – ասաց Բ. Հարությունյանը: Ասաց ու շարունակեց իր հետևողական աշխատանքը: Իր այլ աշխատությունների և հանրագիտարանային բազմաթիվ հոդվածների կողքին նա երկու ստվարածավալ գրքերով հրապարակ բերեց Պետրոս Աղամյանի ու Վահրամ Փափազյանի բեմական գործունեության ժամանակագրական ու փաստական պատկերը՝ այն ամենը, ինչ հնարավոր է եղել դուրս բերել ժամանակի մամուլից ու հուշագրություններից: Սրանք հրատարակվել են 1912 և 1913 թվերին: Թատերական անցյալի ու դերասանական արվեստի պատմությամբ հետաքրքրվողների համար (դրանք այսօր շատ քիչ են) այս գրքերը բացառիկ արժեք կարող են ներկայացնել: Այս երկու գրքերից հետո մտածում ես, թե ի՞նչ արժեն այլևս անառարկա դատողություններն ու ենթադրությունները լավ չտեսած և կիսատ հասկացված կամ չհասկացված երևույթների ու դեպքերի առիթներով:

Բարեբախտաբար Հարությունյանը վճիռներ չի կայացրել, խտրություն չի դրել վկայությունների ու հետքերի միջև. հավասար տեղ է տրվել ժամանակակիցների ճիշտ թե սխալ դիտումներին, և ճշմարտությունը թափանցել է շատ տեղերում: Իր ամբողջության մեջ մեծ գործ է գիտնականի արածը՝ անկախ նրանից, թե ով ինչպես է գնահատում, ում համար ինչ արժեք ունի մշակույթի պատմաբանի «սև աշխատանքը», ինչի ընդունակ են հազվադեպ մարդիկ հումանիտար ու հասարակական գիտությունների բնագավառում:

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արվ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատերագիտության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ արվեստագիտություն, թատրոնի տեսություն և պատմություն: Հեղինակ է 14 գրքի և շուրջ 200 հոդվածի: henrikhovhannisyan1936@gmail.com